# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀՄՆ-19/14-16

ք. Երևան «14» հունիսի 2016թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Գալստյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 14000000 (տասնչորս միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ սփյուռքի նախարարություն | «Էդիթ Պրինտ» ՍՊԸ |
| ք. Երևան Վ. Սարգսյան 3 | ք. Երևան, Դ.Մալյան 43 |
| ՖՆ Գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011000107 | Հ/Հ 25000118400210 |
| ՀՎՀՀ 02705838 | ՀՎՀՀ00009253 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված 1*
*«14» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՄՆ-19/14-16*
*ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ԱՇԽԱՏԱՆՔ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Անվանում | Նկարագիր | Քանակ | Միավոր ի գին | Ընդամենը գումար |
| | | | | | |
| 1 | Մայրենի 4(աշխ. տետր 1) | 17 x 24 օֆսեթ 70 4+4 64 էջ | 170 | 350 | 59500 |
| 2 | Մայրենի 4(աշխ. տետր 2) | 17x24, օֆսեթ 70, 4+4, 64 էջ | 170 | 350 | 59500 |
| 3 | Մայրենի 4 արևելահայերեն | 17x24 օֆսեթ 70, 4+4, 192 էջ | 200 | 1800 | 360000 |
| 4 | Մայրենի 4 դ/գ ՈՒՁ | 14,5x 20 օֆսեթ 70, 1+4, 112 էջ | 100 | 1200 | 120000 |
| 5 | Մայրենի 3(աշխ. տետր 1) | 17 x 24 օֆսեթ 70, 4+4, 56 էջ | 300 | 350 | 105000 |
| 6 | Մայրենի 3(աշխ. տետր 2) | 17x24 օֆսեթ 70, 4+4, 48 էջ | 300 | 350 | 105000 |
| 7 | Մայրենի 3 արևելահայերեն | 17x24, օֆսեթ 70, 4+4, 160 էջ | 250 | 1800 | 450000 |
| 8 | Մայրենի 3 ՈՒՁ | 14,5x20 օֆսեթ 70, 1+4, 72 էջ | 100 | 1199 | 119900 |
| 9 | Բույսերի թագավորությունը. երաժշտական ներկայացում 3 | 21x29,5 օֆսեթ 70, 4+4, 20 էջ | 150 | 2500 | 375000 |
| 10 | Մայրենի 1 դ/գ արևելահայերեն | 20x26 օֆսեթ 70, 4+4, 64 էջ | 150 | 1800 | 270000 |
| 11 | Մայրենի 1 դ/գ արևմտահայերեն | 20x26 կավճ 90 գր, 4+4, 56 էջ | 100 | 2000 | 200000 |
| 12 | Մայրենի 1 ՈՒՁ | 14.5x20 օֆսեթ 70, 1+4, 64 էջ | 50 | 1150 | 57500 |
| 13 | Գիրք- տետր 1 | 17x24 օֆսեթ 70, 4+4, 40 էջ | 350 | 350 | 122500 |
| 14 | Գիրք- տետր 2 | 17x24 օֆսեթ 70, 4+4, 48 էջ | 200 | 350 | 70000 |
| 15 | Գրական ուկնդրում և խոսք նախադպրացականների համար | 20x28 օֆսեթ 70, 4+4, 88 էջ | 150 | 2300 | 345000 |
| 16 | Աղբյուր արևել. (մանկապարտեզի համար) | 20x26 օֆսեթ 70, 4+4, 160 էջ | 250 | 2300 | 575000 |
| 17 | Աղբյուր արևմտ. (մանկապարտեզի համար) | 20x26 օֆսեթ 70, 4+4, 160 էջ | 250 | 2300 | 575000 |
| 18 | Նկարազարդ այբուբեն | 21x30 կավճ 150 գր, 4+4, 38 թ | 120 | 3000 | 360000 |
| 19 | Ընթերցարան- հեքիաթների քո աշխարհը | 20x20 օֆսեթ 70, 4+4, 256 էջ | 100 | 2200 | 220000 |
| 20 | Ընթերցարան 5-6 (հեքիաթներ եւ առակներ) | 17x24 օֆսեթ 70, 4+4, 240 էջ | 100 | 1950 | 195000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 21 | Ընթերցարան 6-րդ դաս. (Մատենիկ) | 17x24 օֆսեթ 70, 4+4, 288 էջ | 100 | 2500 | 250000 |
| 22 | Ընթերցարան 6-րդ դաս. (Մատենիկ) արևմտ. | 17x24 օֆսեթ 70, 4+4, 288 էջ | 100 | 3450 | 345000 |
| 23 | Այբբենարանի պաստառներ | 50x70 ֆուտբորտ, 1+4, 13 կոմպ | 100 | 10000 | 1000000 |
| 24 | Մայրենի 5-6 ՈՒՁ | 14,5x20 օֆսեթ 70, 1+4, 94 էջ | 150 | 1200 | 180000 |
| 25 | Մայրենի 2 ՈՒՁ | 14.5x20 օֆսեթ 70, 1+4, 84 էջ | 50 | 1150 | 57500 |
| 26 | Թելադրությունների ձեռնարկ: Միջին դպրոցի համար | 14,5x20 օֆսեթ 70, 1+4, 160 էջ | 100 | 1500 | 150000 |
| 27 | Բառ ու բանի շտեմարան : Հայ մանկագրության ընտրանի | 21x20,5 օֆսեթ 70, 1+4, 264 էջ | 100 | 1500 | 150000 |
| 28 | Հայոց այբուբենի թագադրումը | 17x24 օֆսեթ 70, 4+4, 56 էջ | 100 | 2370 | 237000 |
| 29 | Տառային ուրախ լոտո | 17x24 ֆուտբորտ, 4+4, | 40 | 3500 | 140000 |
| 30 | Այբբենարանի ուղեկից | 21x20 օֆսեթ 70, 4+4, 48էջ | 120 | 1600 | 192000 |
| 31 | Արև, Արև եկ, եկ: Մանկական բանաստեղծություններ | 20x26, օֆսեթ 70, 4+4, 160 էջ | 100 | 2300 | 230000 |
| 32 | 850 *1 հանելուկ | 14,5x20 կավճ 90, 4+4, 96էջ | 100 | 1440 | 144000 |
| 33 | ՀՀ մարզեր, քաղաքներ ու գյուղեր | 17x24, օֆսեթ 70, 1+4, 1208էջ | 30 | 18000 | 540000 |
| 34 | Օրիորդաց կրթության պատմության ոսկե էջերը | 17x24 օֆսեթ 70, 1+4, 608 էջ | 19 | 3950 | 75050 |
| 35 | Տիկնիկների զարմանահրաշ տոնավաճառ | 17x24, կավճ 90, 1+4, 292 էջ | 50 | 2850 | 142500 |
| 36 | Բառերի աշխարհում 2: Քարտերի հավաքածու | 14,5x20 ֆուտբորտ 120քարտ, 4+4, | 50 | 2900 | 145000 |
| 37 | Հ. Թումանյան: Պատմվածքներ | 14,5x20 օֆսեթ70, 1+2, 140էջ | 100 | 1700 | 170000 |
| 38 | Հ. Թումանյան: Բալլադաներ | 14,5x20 օֆսեթ70, 1+2, 104 էջ | 100 | 1700 | 170000 |
| 39 | Հ. Թումանյան: Պոեմներ | 14,5x20 օֆսեթ70, 1+2, 208 էջ | 100 | 1600 | 160000 |
| 40 | Հայաստան աշխարհ, արևմտահայերեն | 17x24 օֆսեթ 70, 4+4, 88էջ | 100 | 1500 | 150000 |
| 41 | Տոնական ողողանջներ | 17x24 օֆսեթ 70, 1+4, 256էջ | 100 | 2700 | 270000 |
| 42 | "Բարև աշխարհ" մանկական երգերի ժողովածու | 20x29 կավճ 90, 4+4, 64 էջ | 100 | 1600 | 160000 |
| 43 | Սովորում ենք գրել կարդալ հայերեն | 21x30օֆսեթ 70, 4+4, 248 էջ | 60 | 6000 | 360000 |
| 44 | Հայ ժողովրդի առակներ | 14,5x20 կավճ, 90, 4+4, 176 էջ | 100 | 2400 | 240000 |
| 45 | Հայ ժողովրդի առակներ /արևմտահայերեն/ | 14,5x20 կավճ 90, 4+4, 176 էջ | 120 | 2660 | 319200 |
| 46 | Մայրենի 5 (դասագիրք) | 17x24 օֆսեթ 70, 4+4, 240 էջ | 200 | 1900 | 380000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 47 | Մայրենի 5(աշխ. տետր 1) | 17x24 օֆսեթ 70, 4+4, 56էջ | 150 | 350 | 52500 |
| 48 | Մայրենի 5(աշխ. տետր 2) | 17x24 օֆսեթ 70, 4+4, 48 էջ | 150 | 350 | 52500 |
| 49 | Մայրենի 6 (դասագիրք) | 17x24, օֆսեթ 70, 4+4, 240 էջ | 200 | 1900 | 380000 |
| 50 | Հայերեն դարձվաշքների բացատր. բառարան | 17x24 օֆսեթ 70, 1+4, 596էջ | 40 | 6000 | 240000 |
| 51 | Մայրենի 6(աշխ. տետր 1) | 17x24, օֆսեթ 70, 4+4, 48 էջ | 180 | 350 | 63000 |
| 52 | Մայրենի 6(աշխ. տետր 2) | 17x24, օֆսեթ 70, 4+4, 48էջ | 180 | 350 | 63000 |
| 53 | Մանկական գանձարան | 14,5x20 օֆսեթ 70, 1+4, 256 էջ | 150 | 1900 | 285000 |
| 54 | Այբբենարան, արեւելահայերեն | 20x26, օֆսեթ 80, 4+4, 130 էջ | 200 | 1800 | 360000 |
| 55 | Այբբենարան, արեւմտահայերեն | 20x26 օֆսեթ 80, 4+4, 130 էջ | 100 | 2300 | 230000 |
| 56 | Այբբենարան /ՈՒՁ/ | 14,5x20, օֆսեթ 70, 1+4, 64 էջ | 50 | 1200 | 60000 |
| 57 | Ուղղագրական բառագրքույկ | 11,5x16,5 օֆսեթ 70, 4+2,144 էջ | 150 | 800 | 120000 |
| 58 | Քչից շատից, ամեն ինչից, գիրք 5 | 20x29 կավճ 90, 4+4, 48էջ | 100 | 2700 | 270000 |
| 59 | Իմ գրադարանը. Մ. Խորենացի Հայոց պատմ. | 14.5x20 օֆսեթ 70, 1+4, 296 էջ | 50 | 2700 | 135000 |
| 60 | Իմ գրադարանը. Մուշեղ Իշխան | 14.5x20 օֆսեթ 70, 1+4, 136 էջ | 100 | 1800 | 180000 |
| 61 | Գծիր և գունավորիր(աշխ. տետր 1-4) | 16,5x23,5 օֆսեթ 70, 2+4, 128 էջ | 231 | 350 | 80850 |
| 62 | Իմ գրադարանը. Վահան Թեքեյան | 14,5x20 օֆսեթ 70, 1+4, 200 էջ | 60 | 2100 | 126000 |
| 63 | Սայաթ-Նովա (համակազմ 3 գիրք 2 CD) | 14.5 x 15 օֆսեթ 70, 1+4, 268 էջ | 60 | 3350 | 201000 |
| Կատարման սկիզբ | | | Կատարման ավարտ | | |
| 2016թ հունիս | | | 2016թ սեպտեմբեր | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էդիթ Պրինտ» ՍՊԸ
ք. Երևան, Դ.Մալյան 43
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 25000118400210
ՀՎՀՀ00009253

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 2*
*«14» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՍՆ-19/14-16*
*ծածկագրով գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութեր | - | - | - | - | - | - | 14000000 | 14000000 | 14000000 | 14000000 | 14000000 | 14000000 | 14000000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

---
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էդիթ Պրինտ» ՍՊԸ
ք. Երևան, Դ.Մալյան 43
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 25000118400210
ՀՎՀՀ00009253

---
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*«14» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՍՆ-19/14-16*
*ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«14» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՍՆ-19/14-16*
*ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն